Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողների համագործակցային հմտությունների զարգացումը տարբեր մեթոդների միջոցով պատմության դասավանդման մեջ

Հետազոտող ուսուցիչ՝ Մատինյան Վարդուհի

Բովանդակություն

1.Ներածություն…… 3-4

2.Գլուխ 1 …… 5-6

3.Գլուխ 2 …… 7-12

4.Եզրակացություն …… 13

5.Գրականության ցանկ …… 14

Սովորողների համագործակցային հմտությունների զարգացումը տարբեր մեթոդների միջոցով պատմության դասավանդման մեջ

<<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության>>

Ջեյմս Ուայթսոն

Ներածություն

Տարաբնույթ մեթոդների կիրառման հիմնական նպատակը սովորողների համագործակցային հմտությունների զարգացումն ու դասի առավել արդյունավետ յուրացումն է:Այն պետք է սովորողների մոտ զարգացնի մտավոր և զգայական կարողություններ,ինքնուրույնություն,սոցիալականացում:Աշակերտները պետք է կարողանան սովորելո,սովորեցնել, քննարկել իրենց գաղափարները, հաղորդակցվել, միմյանց հետ կիսվել:

Համագործակցային ուսուցման նպատակն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ
- Անհատին դարձնել ակտիվ և խմբում համագործակցող

- Ամենակարևորը դասապրոցեսի ակտիվ մասնակցություն և դասի թեմայի հնարավորին լավ յուրացում

Համագործակցային ուսուցման ժամանակ աշախերտները կիսվում են իրենց գաղափարներով,փոխանակում են տեղեկատվություն,կատարում են ընտրություն և կայացնում որոշումներ:Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի,սովորողների ակտիվության բարձրացման,միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորման, ուսուցման գործընթացի առավել ակիվ և հետաքրքիր անցկացման:Համագործակցության արդյունավետությունը պետք է կախված լինի մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից,ինչպես նաև ուսուցչի կողմից դասի պլանավորման նախապարաստական աշխատանքների գրագետ կազմակերպումից:Դասերի ընթացքում պետք է կիրառել տարաբնույթ մեթոդներ, աշակերտների մոտ ձևավորել հետաքրքրասիրություն առարկայի նկատմամբ, համագործակցային հմտություններ, հնավորություն տալ երեխաներին ավելի արդյունավետ, հաճելի և նպատակաուղված աշխատանք կատարել:

Գլուխ 1

Պատմություն առարկան դասավանդելու ընթացքում բախվել եմ մի շարք խնդիրների. օրինակ առարկայի դասաժամերին երեխաները անհատապես ներկայացնում են դասը տեղից կամ գրատախտակի մոտ, իսկ դասարանի հիմնական մասը այդ ընթացքում լսում է դասընկերոջ պատասխանը:Դասպրոցեսի նման անցկացումը երեխաների մոտ առաջացնում է ձանձրույթ,ուստի սկսում են առարկային նկատմամբ դրսևորել անտարբերություն:Իսկ առարկան բավականին ծավալուն է և խնդիր կա ինչպես առարկան լավ յուրացնելու,այնպես էլ երեխաներին ամբողջապես դասապրոցեսին ներգրավելու և հետաքրքրասիրություն առաջացնելու համար:Հատկապես խնդրի առաջ ենք կանգնում 5-րդ դասարանում, որտեղ անցնում են Հայրենագիտություն առարկան,երեխաների համար բավականին դժվար է հասկանալ,մտապահել և ներկայացնել դասերը, իսկ ուսուցիչը պետք է առաջնահերթ կարողանա հետաքրքրություն առաջացնել առարկայի նկատմամբ:Շատ կարևոր է այդ տարիքում հետաքրքրասիրություն առաջացնել առարկայի նկատմամբ,քանի որ հետագայում իրենք շարունակելու են առարկայի ուսումնասիրումը և դա ևս լուրջ խնդիր է,քանի որ շատերը այդ տարիքում առարկան չսիրելու պատճառով հետագայում չեն սովորելու:

Խնդիր էր առաջացել նաև 8-րդ դասարանում այս ուսումնական տարվա ընթացքում աշակերտների կողմից անտարբերություն էր դրսևորվում գրեթե բոլոր առարկաների նկատմամբ, այդ թվում նաև պատմության:Նույնիսկ դասաժամին քննարկեցի այդ խնդիրը երեխաների հետ,քանի որ զրուցել էի ուսուցիչների հետ և պարզել,որ անտրբեր են սովորելու հարցում:Քննարկման ընթացքում հասկացա,որ ավանդական ուսուցման մեթոդի մշտական կիրառումը անտարբեր է դարձրել աշակերտներին:Թերևս ավանդական ուսուցմամբ դասապրոցեսի անկցկացման ժամանակ կրկին աշխատել եմ աշակերտներին ներգրավել դասապրոցեսի մեջ,սակայն հարցման ընթացքում առավելագույնս 6-7 աշակերտ է պատասխանել:Քանի որ պատմություն առարկան շատ ծավալուն է,ուստի մեկ դասաժամի ընթացքում հնարավոր չի շատ աշակետների ընդգրկել, ինչպես նաև ապահովել բոլորի ներգրավածությունը դասապրոցեսին:Այստեղ մեծ նշանակություն ունի նաև տարիքային տարբեր խմբերի հետ աշխատանքը, այս խնդրին բախվում

են բոլոր ուսուցիչները:Պատմողական առարկայի դեպքում խնդիր է նաև գտնել համապատասխան ճիշտ մեթոդը տվյալ տարիքային խմբի համար, որը պետք է լինի առավել արդյունավետ և երեխաներին հասանելի: Ունենալով դասղեկական դասարան երեխաներից շատ եմ լսում բողոքներ կապված տարբեր առարկաների հետ,որտեղ ևս հիմնական խնդիրը ավանդական ուսուցմամբ դասի անցկացումն է, որի արդյունքում երեխաների հիմնական մասը դասին չի մասնակցում և դա հանգեցնում է անտարբերության:

Գլուխ 2

Համագործակցային ուսուցումը փոխում է ուսուցչի և աշակերտի դերը դասարանում:Պատմության դասավանդման ընթացքում առավել շատ բախվելով այս խնդիրներին, և մեծ ցանկություն ունենալով ապահովել բոլոր երեխաների ներգրավածությունը այն առարկային,որը միտված է ձևավորելու հայրենասեր և բարձր արժեհամակարգով քաղաքացու, հասկացա որ անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ,որոնց շնորհիվ բոլորը կմասնակցեն դասաընթացին և դասի թեման կյուրացնեն:Քանզի առարկան բավականին ծավալուն է, իսկ իմ դասավանդած դասարաններում աշակերտների քանակը բավականին շատ է:

Ներքևում ներկայացված է խճանկար մեթոդը.



- Ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է:Իսկ Ջերոմ Բրոուները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը,որը շրջադարձային եղավ:Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերածում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու,այլ ինչպես սովորելու սկզբունքի հիման վրա: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում:(Համագործակցային ուսուցում:Դասավանդման մեթոդիկա N1 2020թ.(Սահակյան Վ.Ա) գիտական տեղեկագիր): «Խճանկար կամ Ջիգսո» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ

աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում: <<Խճանկար>> մեթոդի կարևորագույն ձեռքբերումներն են՝ անձի զարգացումը և անհատականության ձևավորումը,սթրեսի հաղթահարումը,խմբային աշխատանքի հմտությունները:Խճանկար մեթոդի փուլերը կիրառելով դասաժամին բավականին հեթաքրքիր և արդյունավետ աշխատանք ստացվեց: 5-րդ դասարանում դասավանդելով Հայրենագիտություն առարկան, հասկացա,որ երեխաների համար բավականին բարդ է մեծ ծավալի թեմաները ներկայացնել և մտապահել, որոշեցի կիրառել Խճանկար մեթոդը:

- Փուլ 1. Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում Հայաստան աշխարհ թեման ամփոփեցի կիրառելով Խճանկար մեթոդը:Դասարանում սովորող 30 աշակերտներին բաժանեցի 6 խմբի, յուրաքանչյուր խմբում 5 աշակերտ:Աշակերտներին հանձնարարեցի հետազոտել անցած թեման, մտապահել կարևոր անվանումները,յուրաքանչյուր խմբին հանձնարարելով առանձին դասեր:
- Փուլ2. Աշխատանք Փորձագիտական խմբում Աշակերտները հարստացնում են իրենց նյութերը,փոքրիկ թագեր պատրաստում,որտեղ նկարի կամ տեքստի միջոցով ներկայացված էր տվյալ հատվածը, ես դեռ չգիտեի մուտքի տոմսի մասին,որպեսզի սկզբում կիրառեինք նաև այդ մեթոդը:

- Փուլ 3.Աշխատանք ուսումնական խմբում Աշակերտներից յուրաքանչյուրը խմբի անդամներին ըստ հերթականության

սովորեցնում է իր ենթաթեման:Փորձագիտական խմբերում աշխատանքը ավարտելուց հետո աշակերտները վերդառնում են հենակետային խմբեր:Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր ենթաթեման,պարզում,թե որքանով են իր դասընկերները յուրացրել այն:

- Փուլ 4.Ավարտական աշխատանքը
  Այս փուլում յուրաքանչյուր խումբ իր սովորածը ներկայացնում է դասարանին,ցույց տալով թագերը, վերլուծելով կատարած աշխատանքը:
- Փուլ 5.Ամփոփում
  Ուսուցչի օգնությամբ ամփոփում են խմբերի աշխատանքը, վերլուծում թեման և կատարում գնահատում:
  Խճանկար մեթոդի կիրառման ընթացքում ձևավորված համագործակցային աշխատանքը բավականին ոգևորեց երեխաներին և մեր աշխատանքը ամփոփեցինք բաց դասով:

Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով:
Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ:Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը:
Ուսուցիչը մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը:Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից
- ուսումնական նյութի բովանդակությունից
- աշակերտների տարիքից
- դասարանում աշակերտների թվաքանակից
- պատրաստվածության մակարդակից
- հետաքրքրությունից և շահագրգռվածությունից,

- ուսումնադիտողական պարագաների առկայությունից,
- ժամաքանակից
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից



8-րդ դասարանում առկա խնդրի լուծման համար, որոշեցի սկզբնական փուլում երեխաներին հոգեբանորեն տրամադրել դեպի դասապրոցեսը և նպաստել անտարբեր վերաբերմունքի փոփոխմանը:Քանի որ ապրիլ ամիսն էր և դասի թեմաներով հասել էին Հայոց մեծ եղեռնը դասին, որոշեցի կազմակերպել այցելություն դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ:Երեխաների մոտ այն տարիքն է,որը զգացական-իմացական,այսինքն իրենց շատ հուզական են և ամեն ինչ արդեն գիտակցում են:Նպատակս հետևյալն էր,ինքնաճանաչում,պահանջատիրություն և հայրենասիրություն,երեխաների կապը առարկայի հետ,մտերմացում,քանի որ բավականին երկար մնացինք այնտեղ:Վերջնարդյունքը պիտի լիներ դպրոցում շատ լավ և ստացված դասի անցկացում, որին կմասնակցեին բոլոր աշակերտները,իրենց իսկ ցանկությամբ:Ծիծեռնակաբերդի բարձունքում շատ խորհրդավոր և անմոռանալի օր անցկացրեցինք,որին ներկա էին գրեթե բոլոր աշակերտները և դասղեկը:Երեխաները շատ մեծ հետաքրքրությամբ լսեցին պատմությունը և հուզվեցին շատերը,աննկարագրելի էմոցիաներ էին,որը հետո

կիսվեցին դպրոցում և առաջարկեցին ինձ միասին կազմակերպել հետաքրքիր դաս, որին բոլորը անխտիր կմասնակցեն իրենց իսկ ցանկությամբ:

Դասի թեման աշակերտները իրենք բաժանեցին մասերի, ընտրեցին լրացուցիչ նյութեր,որոնք իրենք էին մշակելու, որոշեցին կազմել տոհմածառ, որտեղ նշված կլիներ,ով որտեղից է արմատներով:Խմբային աշխատանքի միջոցով կազմեցինք պլակատներ, որտեղ ներկայացված էին եկեղեցիներն ու վանքերը, մտավորականները,ինչպես նաև շատ լրացուցիչ նյութեր:Դասը սկսեցին ապրելու ապրիլ երգով,հետո ըստ նախապես բաժանված հատվածների ներկայացրեցին թեման, շատերը նյութը յուրացրել էին դեռ թանգարանում:Խոստացան ավելի լուրջ և ակտիվ մասնակցություն ցուցաբերել պատմության դասաժամերին, լինել պահանջատեր և իմանալ այն արժեքներն ու պատմությունը,որն ունեցել են, իսկ դասը ավարտեցինք մոմավառությամբ,հարգանքի տուրք մատուցելով:Հետագա շաբաթների ընթացքում բավականին փոխվեց տվյալ դասարանի վերաբերմունքը ոչ միայն պատմություն առարկայի, այլ նաև մյուս առարկաների նկատմամբ:Ձևավորվեց համագործակցային աշխատանք ուսուցիչների և աշակերտների միջև, փոխեցինք ավանդական ուսուցման տարբերակը նոր մեթոդներով,փոխվեց երեխաների վերաբերմունքը և առարկաների ուսուցման և

միմյանց նկատմամբ:Ծնողական ժողովին լսեցի նաև ծնողների և դասղեկի արձագանքը,որ երեխաների մոտ փոփոխություն են նկատել, սկսել են ավելի շատ կարևորել իրենց դպրոցը:Աշխատանքի արդյունքում երեխաներին դիտարկեցի բոլորովին այլ տեսանկյունից, փոխվեց նաև իմ վերաբերմունքը շատերի նկատմամբ:



Եզրակացություն

Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:Ժամանակակից աշխարհում, երբ ամեն ինչ արագ է առաջ ընթանում,երբ ամեն ինչ թվայնացված է և աշակերտի համար կենսակերպ է դարձել նորագույն տեխնիկաներն ու տեխնոլոգիաները,կրթությունը և դասավանդման մեթոդները չեն կարող հետընթաց ապրել:Արդյունավետ աշխատանք կատարելու համար ուսուցիչը և աշակերտները պետք է ջանան ստեղծել համագործակցային մթնոլորոտ:Կիրառելով մի շարք մեթոդներ տարբեր դասարաններում՝ դասապրոցի ժամանակ, եկա այն եզրահանգման,որ շատ հմտություններ ես ինքս սովորեցի իմ աշակերտներից,դասարաններում ստեղծվեց ավելի անմիջական մթնոլորտ,ինչպես նաև կարողացա երեխաների մոտ ձևավորել սովորեցնելու հմտություններ և համագործակցելու կարողություններ, ոչ միայն դասընկերների, այլ նաև ուսուցիչների հետ:Համագործակցային աշխատանքի ժամանակ,կիրառելով շատ մեթոդներ և ավելի անմիջական շփվելով երեխաների հետ,համոզվեցի,որ շատ լավ սերունդ ունենք,ովքեր ավելի համարձակ են,խելացի,ինքնուրույն և գիտակից,պարզապես պետք է և՛ տանը, և՛ դպրոցում լսենք երեխաների կարծիքը,ինչպես նաև մեծ աշխատանք տանենք,որպեսզի երեխաներին ավելի մոտ դարձնենք և՛ առարկային, և՛ մեզ:Տարաբնույթ մեթոդների կիրառումը պատմության դասավանդման ընթացքում ձևավորեց երեխաների մոտ ընկերական մթնոլորտի ստեղծում,թվերի մտապահում,դեպքերի և իրադարձությունների դասակարգում,համագործակցություն, հետաքրքրասիրություն առարկայի նկատմամբ, նյութի ավելի դյուրին ընկալում,խնդիրների հաղթահարում թիմային աշխատանքի շնորհիվ:Ուստի ուսուցիչը և աշակերտները չպետք է խուսափեն նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառելուց, քանզի արժևորելով մեր անցյալը պետք է կարևորենք մեր ապագան, յուրացնելով ներկայիս հմտություններն ու կարողունակությունները,որոնք հանդիսանալու են բանալի՝ դեպի գիտությունների և նվաճումների մի մեծ աշխարհ,որտեղ ներթափանցելով կգրանցենք հաջողություններ:

Գրականության ցանկ

http://gspi.am/media/journal/2014n1b/37.pdf

http://shsu.am/media/journal/2020n1b/25.pdf

Համագործակցային ուսուցում։Դասավանդման մեթոդիկա N1 2020թ.(Սահակյան Վ.Ա) գիտական տեղեկագիր

Ջոն Դյուիի-Դպրոցը և հասարակությունը /<<Դպիր>> մանկավարժական հանդես Երևան 2008/

https://lib.mskh.am/images/books/Dprocy-ev-hasarakutyuny.pdf

https://editprint.am/students-data/%D5%8F%D5%B8%D5%B6%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6%20%D4%B1%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A1.pdf

https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.html

https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B3%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80_%D5%AF%D5%A1%D5%B4_%D5%8B%D5%AB%D5%A3%D5%BD%D5%B8